



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

11.09.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/32

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ) քննելով «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի 21.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 21.08.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գնանշման հարցման եղանակով, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով, ս.թ. օգոստոսի 2-ին «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) մասնակցելով «Բժշկական պարագաների, սարքերի» ձեռք բերման գնման ընթացակարգին՝ հայտ է ներկայացրել 2-րդ և 3-րդ չափաբաժիններին: Մասնավորապես, 2-րդ չափաբաժնով «Վիրահատական լույս առաստաղային, LED տեսակի»՝ քանակը 3 հավաքածու, և 3-րդ չափաբաժնով «Անստվեր վիրահատակ LED լուսատու առաստաղային»՝ 5 հավաքածու: Ընկերությունը գնային

առաջարկը ներկայացրել է ընդհանուր թվով 2-րդ չափաբաժնով՝ 6.120.000 ՀՀ դրամ, իսկ 3-րդ չափաբաժնով՝ 9 000 000 ՀՀ դրամ, և դրանց համապատասխան ընդահանուր գումարի հինգ տոկսի չափով տուժանքի մասին միակողմանի ստորագարված համաձայնագիր և վճարման պահանջագիր՝ մասնակցության հայտի ապահովում՝ 760.000 ՀՀ դրամ: Ընկերությունը ավելացրած արժեքի հարկ վճարող է և վերը նշված չափաբաժիններով ներկայացված ապրանքների հարկման դրույքաչափը զրո է: Ուստի, գնային առաջարկի 4-րդ սյունակում թվով նշել է 0 թիվը: Գնման գործընթացի հայտ է ներկայացրել ևս 5 մասնակից, որոնք 4-րդ սյունակում նշել են 0 թիվը, միաժամանակ՝ նաև տառերով:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը ս.թ. օգոստոսի 18-ին Armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցվել է առ այն, որ. «...»ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սակայն, գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել անհասականալի և անտրամաբանական հիմքերով: Հանձնաժողովը որոշումը կայացրել է՝ հղում կատարելով գնումների օրենսդրությանը, մասնավորապես այն հանքամանքին, որ գնային առաջարկում առկա են անհամապատասխանություններ՝ տառերի և թվերի միջև, և հիմք է ընդունվել տառերով գրվածը՝ (թվերով գրվել է 9 000 000, իսկ տառերով՝ ինը հարյուր հազար):

Այսինքն, գնահատվել է միայն 3-րդ և 5-րդ սյունակներում նշված թվերով և տառերով գրվածը, մինչդեռ գնումների օրենսդրությամբ և մրցույթի հրավերով սահմանված կարգով գնային առաջարկի 3-րդ, 4-րդ, 5-րդ սյունակները պետք է լրացվեն թվերով և տառերով: Ընկերությունը գնային առաջարկը թյուրիմացաբար ներկայացրել է թերի, մրցույթի հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Գնումների օրենսդրությամբ, ինչպես նաև հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով գնահատող հանձնաժողովը պարտավոր էր 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընկերության ներկայացրած առաջարկը գնահատել անբավարար և մերժել:

Որպես Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցներ, Ընկերությունը նշել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Այսինքն, երաշխավորվում է գնումների մասնակիցների

հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանն ու կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ կոնկրետ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, ընկերության նկատմամբ դրսևորել է խտրական վերաբերմունք: Կամայական ձևով գնահատել է միայն գնային առաջարկի 3-րդ և 5-րդ սյունակներում տառերով և թվերով գրվածը, արձանագրությամբ ներկայացնելով ձևական հիմնավորում: Մինչդեռ 5-րդ սյունակի հանրագումարը 3-րդ և 4-րդ սյունակներում նշված թվերի ընդհանուր գումարն է՝ $5=3+4$, որը պետք է նշվեր և տառերով և թվերով:

Ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել է թերություններով և բացթողումներով, հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Ուստի ընկերության գնային առաջարկը 2-րդ և 3-րդ չափաբաժիններով պետք է գնահատվեր անբավարար, հրավերի պայմաններին ոչ համապատասխան, և մերժվեր: Գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել մրցույթի հրավերի 8.5 կետը, այն է «... եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրվածը»: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը պարատավոր էր համեմատել գնային առաջարկի յուրաքանչյուր սյունակում տառերով և թվերով ներկայացրած առաջարկը: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կամայական ձևով՝ չհամադրելով գնային առաջարկի 4-րդ սյունակում նշվածը՝ խախտելով ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանը՝ «գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևը, ինչպես նաև 2017թ. հուլիսի 25-ին թիվ 1 որոշմամբ նույն գնանշման հարցման հանձնաժողովի կողմից հաստատված հրավերի և հայտարարության տեքստում առկա հավելված 5-ով սահմանված ձևը՝ ցուցաբերելով սուբյեկտիվ, հայեցողական դիրքորոշում:

Մասնավորապես, մրցույթի հրավերում հավելված 5-ում հստակ նշված է, որ տառերով լրացնելուց հետո մասնակիցը պարտավոր է գնային առաջարկը լրացնել թվերով և տառերով, իսկ 4-րդ սյունակում ընկերության կողմից տառերով չի լրացվել, որն էլ հիմք է ընկերության գնային առաջարկը գնահատելու անբավարար և մերժելու: Ընկերությունը ավելացրած արժեքի հարկ վճարող է: Իսկ 4-րդ սյունակում 0 է նշվել, քանի որ հայտով առաջարկվող ապրանքների հարկման դրույքաչափը զրո է:

Մրցույթի հրավերի 8.2 կետով հստակ սահմանված է, որ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնային առաջարկի 4-րդ սյունակը լրացվել է թերի միայն թվով, ուստի հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր: Հատկանշական է նաև, որ զրոն բնական, բացարձակ թիվ է և կիրառական մաթեմատիկայում, հաշվողական համակարգում, ինչպես նաև հաշվապահական հաշվառման գործընթացում օգտագործվում է որպես թվաբանական, քանակական հաշվարկման ցուցանիշ և որպես թվանիշ, որը կիրառելի է մի շարք թվաբանական գործընթացներում: Զրոյից մինչև ինը՝ տասնորդական թվեր են: Ի դեպ, եթե 4-րդ սյունակում պատահականորեն զրոյի փոխարեն նշվեր 2 կամ այլ թիվ, ապա տվյալ պարագայում հարց կառաջանար, թե գնահատող հանձնաժողովը ինչ մոտեցում կդրսևորեր:

Գնահատող հանձնաժողովը ոչ ստանդարտ մոտեցում է ցուցաբերել՝ խախտելով նաև օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները: Մասնավորապես մի դեպքում գնահատող հանձնաժողովը 5 մասնակիցների հայտերը գնահատում է հրավերի պահանջներին համապատասխան, այսինքն մասնակիցների գնային առաջարկների 4-րդ սյունակը լրացվել է հարվերի պահանջներին համապատասխան՝ թվերով և տառերով՝ 0 (զրո), մյուս դեպքում «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի գնահատումը իրականացրել այլ կերպ՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում:

Գնումների կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017թ. մայիս 4-ին ընդունված N 526-Ն որոշման (այսուհետև՝ Կարգ) 67-րդ հոդվածով և մրցույթի հրավերի 8.24 կետով գնահատող հանձնաժողովը կարող էր ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Իսկ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Մասնավորապես, նման դեպքերում գնահատող հանձնաժողովը կարող էր պարզաբանումներ պահանջել՝ թե մասնակցից, թե այլ պաշտոնական աղբյուրներից: Սակայն տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը անգործության է մատնվել:

Գնահատող հանձնաժողովը չի պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, մասնավորապես, մրցույթի հարավերի 8.2 կետով սահմանված է, որ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է կամայական ձևաչափով, կայացվել է մրցույթի հրավերի պահանջներին և այլ իրավական ակտերին հակասող և ապօրինի որոշում: Թեև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով շեշտադրվում է՝ այն հանգամանքը, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար՝ համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավագործության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակաիրավական արարք: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է շրջանցել օրենքն ու ընդունել կամայական որոշում, ինչի արդյունքում կարծեգրվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հոչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա, ինչը հարիր չէ սահմանդրորեն իրավական բնորոշվող պետությանը: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատում

իրականացնել վերաբերելի օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան, ինչը, ինչպես վերը փաստվել է, չի իրականացրել:

Վերլուծելով վերոգրյալները մեկ համատեքստում, ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել իրավական ակտերի ակնհայտ և կոպիտ խախտումներով, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին հակասող:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ 2.3, 3.1, 3.2, 4.1, 4.2, 4.3 և 6-րդ կետերով կայացրած որոշումները՝ քանի որ դրանից բխող հետագա գործողությունները կատարելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ին կհասցվեն վնասներ:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 3 արձանագրությամբ 2.3, 3.1, 3.2, 4.1, 4.2, 4.3 և 6-րդ կետերով կայացրած որոշումները, ինչպես նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, իսկ 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումները՝ հիմք Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը:

3. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցներից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը պահանջելը, թիվ 3 արձանագրությամբ 4.1, 4.2, 4.3 և 6-րդ կետերով կայացրած որոշումները: Չեղյալ հայտարարել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը պահանջելու ծանուցումները: Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը պահանջել միայն գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացրած համապատասխան որոշումից հետո:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2869 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական պարագաների և սարքերի» գնման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգին սահմանված կարգով հայտ են ներկայացրել թվով 6 կազմակերպություններ, այդ թվում՝ «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում պարզվեց, որ 3-րդ չափաբաժնի մասով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի գնային առաջարկում տառերով արտահայտված գինը (ինը հարյուր հազար ՀՀ դրամ) չի համապատասխանում թվերով արտահայտված գինը (9,000,000 դրամ):

Առաջնորդվելով ընթացակարգի հրավերի 8.5 կետով՝ հանձնաժողովը որոշեց հիմք ընդունել տառերով գրված գումարը և տվյալ չափաբաժնի մասով մասնակցին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակցից: «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ին սահմանված կարգով առաջարկվեց ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է մասնակցի առաջարկում որպես ավելացված արժեքի չափ նշված «0»-ն տառերով չգրելու հանգամանքին, ապա համանման դեպքում առկա է լիազորված մարմնի կողմից ներկայացված համապատասխան պարզաբանում (կցվում է), որի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերը նշված դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի 21.08.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.08.2017թ. թիվ ԴՎԱ/2869 գրությունը և դրան կից՝ ՀՀ ֆինանսների նախարարության 16.08.2017թ. թիվ

03/27-1/14951-17 գրությամբ ներկայացված պարզաբանումը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.08.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Բժշկական պարագաների և սարքերի» գնման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ)::

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 02.08.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի (շարունակությունը՝ 17.08.2017թ.-ին) թիվ 3 արձանագրության՝

- 2.3 կետով արձանագրվել է, որ մասնակիցների հայտերով ներկայացված փաստթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

- 3.1 կետով արձանագրվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել նույն արձանագրության Հավելված N1-ում նշված մասնակիցները (Հավելված N1-ում նշված մասնակիցների թվում է նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն):

- 3.2 կետով արձանագրվել է, որ «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի առաջարկած տառերով արտահայտված գինը չի համապատասխանում թվերով արտահայտված գնին: Առաջնորդվելով ընթացակարգի հրավերի 8.5 կետով՝ հանձնաժողովը որոշեց հիմք ընդունել տառերով գրված գումարը (ինը հարյուր հազար ՀՀ դրամ):

- 4.1 կետով որոշում է ընդունվել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշում է ընդունվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

• 4.3 կետով որոշում է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

• 6-րդ կետով որոշում է ընդունվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը:

«Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Մինչդեռ, ըստ բողոքաբերի, գնահատող հանձնաժողովը որոշումը կայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտմամբ: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով սահմանված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 5-րդ հավելվածի համաձայն՝ տառերով լրացնելուց հետո մասնակիցը պարտավոր է գնային առաջարկը լրացնել թվերով և տառերով, իսկ 4-րդ սյունակում Ընկերության կողմից գումարը տառերով չի լրացվել, ինչն էլ, բողոքաբերի կարծիքով, հիմք է Ընկերության գնային առաջարկը մերժելու համար:

Պատվիրատուն 30.08.2017թ. թիվ թիվ ԴՎԱ/2869 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընկերությանը ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումը կայացնելիս առաջնորդվել է ընթացակարգի հրավերի 8.5 կետով, այն է՝ հիմք է ընդունել տառերով գրված գումարը: Միաժամանակ, Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված համապատասխան պարզաբանումը, ըստ որի, վերը նշված դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Բողոքի քննության նպատակով 24.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ՝ նշելով, որ Ընկերությունը

գնային առաջարկը ներկայացրել է թերություններով և բացթողումներով, հրավերի պահանջներին ոչ համապատասխան, ուստի Ընկերության գնային առաջարկը 2-րդ և 3-րդ չափաբաժիններով պետք է գնահատվեր անբավարար, հրավերի պայմաններին ոչ համապատասխան, և մերժվեր: Ըստ բողոքաբերի, գնահատող հանձնաժողովը խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները, քանի որ մի դեպքում հանձնաժողովը 5 մասնակիցների հայտերը (4-րդ սյունակը լրացվել է հարվերի պահանջներին համապատասխան՝ թվերով և տառերով՝ 0 (զրո)), գնահատել է հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար, իսկ մյուս դեպքում՝ «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի գնահատումն իրականացրել է այլ կերպ՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի գնահատման ժամանակ հանձնաժողովն առաջնորդվել է բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 16.08.2017թ. թիվ 03/27-1/14951-17 գրությամբ ներկայացված պարզաբանմամբ:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի գնի առաջարկում տառերով արտահայտված գինը նշված է՝ ինը հարյուր հազար ՀՀ դրամ, իսկ թվերով արտահայտված գինը՝ 9,000,000 դրամ: Նույն գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը նշված է միայն թվով՝ 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 8.5 կետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրվածը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի N5 հավելվածով՝ մասնակցի կողմից ներկայացվող գնի առաջարկի օրինակելի ձևի համաձայն՝ գնի առաջարկի «ԱԱՀ» սյունակում նշված է, որ ԱԱՀ-ի գումարը ներկայացվում է տառերով և թվերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնի առաջարկում ԱԱՀ-ի գումարը տառերով չգրելով՝ խախտել է Հրավերով նախատեսված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի հայտը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 3 արձանագրությամբ 2.3, 3.1, 3.2, 4.1, 4.2, 4.3 և 6-րդ կետերով կայացրած որոշումները, ինչպես նաև «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ին 2-րդ

չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու, իսկ 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումները:

3. Չեղյալ համարել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը պահանջելու մասին ծանուցումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ